նը, բայց շերամապահների տնտեսական դրութիւնն արգելք է լինում դորան։ Այժմ արդէն, տեսնելով խաղողի այգիների առաջանալը, շատերը կոտորում են թթենիները, որպէս զի խաղողի այգիներ ձգեն, և կասկած չկայ, որ եթէ օգնութիւնը շուտ չհասնի, մօտ ապագայում կ'փչանան թթենու այգիները, որոնց մշակութեան համար բնակիչները քիչ տարիներ չեն աշխատել։

Ներկայ տարին յաջող չէր շերամապահութեան համար. անձրեւային գարունը, անյարմար որդնաբուծարանների պատճառով, առաջացրեց որդների բազմատեսակ հիւանդութիւններ, որոնք կոտորվում էին մեծ քանակութեամբ, բայց և այնպէս ներկայ տարուայ բոժոժների քանակութիւնը աւելի եղաւ նախընթաց տարուանից, այսինքն՝

Գեօկչայի գաւառումն ժողովուած է մօտ			7,000 փութ
Շամախու	»	»	2,500 »
Լենքորանի	»	»	245 »
		բոլորը	9,745 փութ

Բոժոժի գինը քիչ աւելի բարձր էր, քան 1890 թուին՝ այսպէս՝ բաց բոժոժի փութը (տեղական տեսակի) արժէր 8–10 ր. իսկ եւրոպական բոժոժինը՝ 13–16 ր. չոր բոժոժի փութը արժէր 30–40 ր. իսկ եւրոպականը՝ 38–44 ր. հում մետաքսի փութը տատանվում էր 140 և 160 ր. մէջ։

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Բագուի նահանգի այգեգործութիւնը կենդրոնացած է հետեւեալ գաւառներում՝ Ղուբու, Շամախու, Գեօկչայի, Լենքորանի և Բագուայ։

Այգեգործութեան պարապմունքը ամենից աւելի զարգացած է Ղուբու գաւառում, ապա հետեւում են Շամախու և Գեօկչայի գաւառները. այս տեղ այգիները կենդրոնացած են երկու դաշտերում, «Խանչոբանը» Շամախու գաւառում, իսկ Սարդարլու Գեօկ-